Արձանագրություն N 4

2020թ. մայիսի 19-ին կայացավ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Գեորգի Մնացականյանի անվան N 7 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի նիստը՝ նախագահությամբ խորհրդի նախագահ Կ. Կարեյանի , քարտուղարությամբ՝ Ս. Ավագյանի :

Նիստին մասնակցում էին խորհրդի 8 անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Գեորգի Մնացականյանի անվան N 7 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարելու մասին:
/Զեկուցող՝ խորհրդի նախագահ Կ. Կարեյան/

Լսեցին - խորհրդի նախագահ Կ. Կարեյանի հաղորդումը դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարելու մասին:

Զեկուցողը նշեց , որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ»-ի «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Գեորգի Մնացականյանի անվան N7 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար պետք է հայտարարի մրցույթ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թ. Մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ»-ի 2-րդ կետի 2-րդ ենթակետի, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 6.1, 7-րդ, 8-րդ կետերի պահանջներով խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Գեորգի Մնացականյանի անվան N 7 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար 2020թ. հունիսի 3-ից հայտարարել մրցույթ:
2. Հաստատել կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը տրամադրել ՀՀ ԿԳՄՍՆ-ին ոչ ուշ, քան 01.06.2020թ., հրապարակել azdarar.am կայքում, ինչպես նաև երկու անգամ՝ հնգօրյա պարբերականությամբ՝ 03.06.2020թ. և 08.06.2020թ. «Գեղամա» հեռուստաընկերությամբ:

4. Մրցույթին մասնակցելու համար հայտերն ընդունել հայտարարության երկրորդ հրապարակման օրվանից՝ 2020թ. հունիսի 8-ից մինչև 2020թ. հուլիսի 7-ը ներառյալ:
5. Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների /փաստաթղթերի/ ընդունման պատասխանատությունը վերապահել խորհրդի անդամ Ս. Ավագյանին:
6. Մրցույթն անցկացնել Գավառի Գեորգի Մնացականյանի անվան N7 միջնակարգ դպրոցի շենքում՝ այդ նպատակի համար առանձնացված սենյակում, 2020թ. հուլիսի 16-ին՝ ժամը 11^{00}-ին:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ Գեղարքունիքի մարզպետին կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար մրցույթ հայտարարելու մասին խորհրդի որոշման պատճենը ներկայացնելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Գեղարքունիքի մարզպետի կողմից խորհրդին գրավոր առարկություններ և առաջարկություններ չներկայացնելու դեպքում:

Նիստի նախագահ՝ Կ.Կարեյան

Քարտուղար՝ Ս. Ավագյան

Հավելված
«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի
Գեորգի Մնացականյանի անվան N 7 միջնակարգ դպրոց»
պետական ոչ առևտրային կազմակերպության
կառավարման խորհուրդի 2020թ. մայիսի 19-ի նիստի
որոշման 2-րդ կետի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Գեորգի Մնացականյանի անվան N 7 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհուրդի հաստատության տնօրենի թափուր տեղի պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարում է մրցույթ:

Հաստատության տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են.

1. ՀՀ քաղաքացիությունը
2. բարձրագույն կրթությունը
3. ուսումնական հաստատության կառավարման իրավունքը /հավաստագիրը/

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են.

1. դիմում հաստատության խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
3. հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,
4. տվյալ հաստատության զարգացման ծրագիրը /ներկայացվում է մրցույթի օրվանից առնվազն 3 օր առաջ/,
5. հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթը /առկայության դեպքում/,
6. աշխատանքային գրքույկի պատճենը,
7. զինվորական գրքույքի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Գեորգի Մնացականյանի անվան N 7 միջնակարգ դպրոցում:

Փաստաթղթերն ընդունվում են 2020թ. հունիսի 8-ից, մինչև 2020թ. հուլիսի 7-ը ներառյալ, ամեն օր ժամը 10^{00}–ից մինչև 15^{00} բացի շաբաթ և կիրակի և այլ՝ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2020թ. հուլիսի 16-ին ժամը 11^{00}–ին «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Գեորգի Մնացականյանի անվան N 7 միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ-ի շենքում:

Հասցե՝ ք. Գավառ Գ. Միքայելյան 40
Տեղեկությունների համար զանգահարել՝ 093904959, 055905940